ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ. ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
2021, № 3, 28-38 *Փիլիսոփայություն*
https://doi.org/10.46991/BYSU: E /2021.12.3.028

ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՄՈՎՍԵՍ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Հայ ժողովրդի պատմական ճակատագրի բերումով հայրենիքի և պետության սահմանների բնութագրմանը և դրանց հարաբերմանն առնչվող հարցերը արդի աշխարհաքաղաքական վերադասավորումների համատեքստում տեսական ու գործնական մեծ հնչեղություն են ստացել: Խնդիրն այն է, որ հայ ժողովրդի պատմական և քաղաքական հայրենիքները (պետությունը) չեն համընկնում ո՛չ տարածքային և ո՛չ էլ բովանդակային առումներով: Միևնույն ժամանակ, պատմական հայրենիքի բարոյական և գեղագիտական բացարձակացումը ստեղծել է անցյալը մարմնավորող մի իդեալ, որի համեմատ քաղաքական հայրենիքն իր հոգսառատ առօրյայով, չվերջացող հիմնախնդիրներով և նոր մարտահրավերներով շատ-շատերի համար կորցնում է իր գրավչությունն ու արժեքը: Այս առնչությամբ խնդրի էությունը հասկանալու և հնարավոր լուծումներ ուրվանշելու համար նոր իմաստ ու նշանակություն են ստանում սահմանազանցում (տրանսգրեսիա) և անդրանցականություն (տրանսցենդենցիա) հասկացությունները, որոնցից առաջինը՝ սահմանազանցումը, մեր պարագայում բնութագրում է ոչ թե սեփական մշակութային սահմանների ընդլայնման, այլ եղած սահմաններից դուրս, սոցիոմշակութային ու քաղաքակրթական այլ տարածություններում առավել «կայացած» կեցության (կյանքի) փնտրտուքների ուղղվածությունը, իսկ երկրորդը՝ անդրանցականությունը, արտահայտում է պատմական հայրենիքի միֆական, մշտապես արդիական և առաջնային կերպարը, որը երբեմն ստվերում է պետության առջև ծառացած կենսական հիմնախնդիրների և դրանց լուծման անհրաժեշտության արդիականությունը:

Բանալի բառեր - *հայրենիք, պետություն, սահման, սահմանազանցում, անդրանցականություն, գաղափարախոսություն, հայրենասիրություն*

Չկա հայրենասիրություն՝ չկա հոգևոր Հայրենիք:
Եղածը լոկ աշխարհագրական սահմաններ են,
իսկ նմանը ավազահիմն է, դյուրակործան, անապագա:
Գարեգին Նժդեհ

Սահման հասկացության փիլիսոփայական-մշակութաբանական վերլուծությունը ցույց է տալիս, մի կողմից, սահմանի համընդհանուր նշանակությունը մարդու, նրա կյանքի կազմակերպման ձևերի և

դրանք ուսումնասիրող գիտությունների համար, իսկ մյուս կողմից՝ դրա կիրառական մեծ ներուժը: Կարելի է ասել, որ սահմանն այն երևույթներից է, որոնք, ունենալով փիլիսոփայական-մշակութաբանական հարուստ բովանդակություն և բազմակողմանի իմաստավորման կարիք, միևնույն ժամանակ ունեն անմիջական ելք դեպի մարդկանց առօրյա կյանք, կիրառական մեծ նշանակություն հասարակությունների ու պետությունների ճակատագրերի իմաստավորման և մի շարք հիմնախնդիրների լուծման մեջ: Առանց սահմանի հնարավոր չէ առհասարակ պատկերացնել մարդկության կյանքը. այն սկսվում է բնությունից մարդու սահմանազատումից, շարունակվում արդեն մարդու կողմից ստեղծված մշակութային համակարգերում՝ էթնիկական, ազգային, ավանդական, ժամանակակից, սահմանագծումների տեսքով և այնուհետև ծավալվում դեպի նոր ենթամշակույթների սահմանազատում: Սահմանի համընդհանուր նշանակության թերևս ամենաակնհայտ դրսևորումն այն է, որ սահմանը ոչ միայն ցույց է տալիս որևէ երևույթի տարբերությունը ուրիշից, այլև ստեղծում է միջավայր, որում երևույթը համընկնում է ինքն իր հետ, կարող է լինել այն, ինչ ինքն է: «Այն վայրը, որտեղ ինչ-որ բան դադարում է լինել այն, ինչ ինքն է, և դառնում է ուրիշ, սահմանն է: Միայն իր սահմանում և *շնորհիվ* այդ սահմանի ինչ-որ բան այն է, ինչ կա»[1]: Սահմանի բազմակողմանի ուսումնասիրությունն է՛լ ավելի է կարևորվում հատկապես այն դեպքերում, երբ գործ ունենք երևույթների հետ, որոնց սահմաններն առաջին հայացքից համընկնում են (օր.՝ պետություն, երկիր, հայրենիք), սակայն այդպիսի նույնացումը սխալ է և առաջացնում է սահմանի հասկացման և սահմանազատման անհրաժեշտություն:

Պարզելու համար, թե որոնք են պետության և հայրենիքի սահմանները, և որոնք են դրանց տարբերությունները, պետք է նախ բնութագրել պետությունը և հայրենիքը, ցույց տալ դրանց տարբերությունները: Պետությունը հասարակական կյանքի կազմակերպման **քաղաքական** ձև է՝ ի տարբերություն հայրենիքի, որը ենթադրում է կյանքի կազմակերպում **ազգային-մշակութային** երևույթների շուրջ (սովորույթ, ավանդույթ, միֆ և այլն): Հայրենիքն այն տարածքն է, որը մշակվել է կյանքի կազմակերպման մասին տվյալ ժողովրդի պատկերացումներին համապատասխան[2]: Հայրենիքն առնչվում է ժողովրդի ծագման և գոյության հոգևոր-բարոյական հիմքերի և դրանց շուրջ ծավալվող դիցարարության հետ, մինչդեռ պետությունը բնութագրում է իրավական և քաղաքական հարթություններում մարդու և կյանքի կապերն ու հարաբերությունները: Այս իմաստով **հայրենիքն արտահայտում է ազգա-**

---

[1] **Гегель Г. В. Ф.** Энциклопедия философских наук. Т. 1. Наука логики. М., "Мысль", 1974, с. 229.

[2] Տե՛ս **Артановский С. Н.** Понятие Родины: современные модификации // Вестник Санкт-Петербургского государственного университета культуры и искусств. 2012, № 3, էջ 6-10:

յին-գաղափարախոսական ռոմանտիզմը, իսկ պետությունը՝ քաղաքական ռեալիզմը: Պետք է նկատի ունենալ, որ քաղաքական ինքնություն և ինքնիշխան կյանքի փորձ ու ավանդույթներ չունեցող հասարակությունները, երբ ձեռք են բերում պետություն, միաժամանակ հայտնվում են ազգային-հայրենասիրական ռոմանտիզմի և քաղաքական ռեալիզմի երկընտրանքի առջև: Այն հասարակությունները, որոնք ընտրություն են կատարում հօգուտ ազգային-հայրենասիրական ռոմանտիզմի, պատկերավոր ասած, զոհաբերում են պետությունը հայրենիքին, իրականությունը՝ երազանքին, ապագայի բազմաթիվ հնարավորությունները՝ արդեն կատարված անցյալին:

Պետության և հայրենիքի սահմանազատման նոր հնարավորություններ են բացվում, երբ այս երկու երևույթները դիտարկում ենք ժամանակի գործոնի ներքո: Այդպես, պետությունը, լինելով հանրային կյանքի կազմակերպման քաղաքական ձև, ստեղծում է ապագայի մոդել և տանում հասարակությունն այդ ուղղությամբ: Այլ կերպ ասած՝ պետությունը, ելնելով ներկայից, նախագծում է ապագան, և այդ գործընթացում ներկան հիմքն է, ապագան՝արդյունքը: Հայրենիքի դեպքում հիմքը անցյալն է, արդյունքը՝ ներկան: Այստեղից բխում է նաև, որ պետությունը մեխանիզմ է, որը գտնվում է անընդհատ շարժման մեջ և պահանջում է ամենօրյա աշխատանք, մինչդեռ հայրենիքը սրբազան տարածք է, միակ և անփոխարինելի արժեք[3]: Եվ իրոք, կարելի է ապրել տարբեր պետություններում, ընդունել տարբեր երկրների քաղաքացիություն և միաժամանակ չունենալ դրանցից և ոչ մեկի հետ այն հոգևոր կապը, որ կա մարդու և հայրենիքի միջև: Պատկերավոր ասած՝ պետությունը պայմանագիր է կնքում մարդու հետ, որի շրջանակներում վերջինս ձեռք է բերում քաղաքական և իրավական կարգավիճակ, տնտեսական և այլ գործունեություն իրականացնելու իրավունքներ ու պարտականություններ: Այս տեսակետից պետությունը (քաղաքացիությունը) ընտրություն է, իսկ հայրենիքը (ազգային-մշակութային պատկանելությունը)՝ տրվածություն: Պետությունը կարող է դժգոհություն առաջացնել, հայրենիքը՝ ոչ: Լինելով նախնիների կյանքի փորձի զտման արդյունք՝ հայրենիքն ընկալվում է որպես ազգային-հոգևոր միայն դրական, բարձր արժեքների ամբողջություն, որը սնուցում է մարդու հոգևոր աշխարհը: Սրանով են պայմանավորված, թերևս, հայրենիքի՝ որպես բնօրրանի ընկալումները: Այս տեսանկյունից՝ հայրենիքը ազգային-մշակութային յուրահատուկ տաճար է, որը կառուցվել է հնում և փոխանցվում է դարերի միջով հաջորդ սերունդներին, որոնք նույնպես պետք է սրբորեն պահպանեն այն: Ուստի, հայրենիքի սահման ասելով պետք է հասկանալ ոչ թե ֆիզիկական սահման, ինչպես պետության դեպքում է, այլ առաջին հերթին հոգևոր սահման, որը գո-

[3] Տե՛ս **Трубецкой Е. Н.** Избранные произведения. Ростов-на-Дону: «Феникс», 1998:

յություն ունի մարդու գիտակցության մեջ և վերագրվում է բոլոր այն տարածքներին, որտեղ ձևավորվել, ծավալվել և զարգացել է նրա ազգային մշակույթը: Հետևաբար, պատմական հայրենիքի սահմանները հոգևոր-մշակութային են, քաղաքական հայրենիքի[4] (պետության) սահմանները՝ ֆիզիկական: Այս իմաստով հայրենիքի և պետության սահմանները պարտադիր չէ, որ համընկնեն: Հայաստանի դեպքում պետությունը ձևավորվել է հայրենիքի մի հատվածում, որի սահմանները շատ ավելի փոքր են, քան պատմական հայրենիքի սահմանները: Նման դեպքերում առաջանում են բազմաթիվ հարցեր հայրենիքի և պետության հարաբերության վերաբերյալ: Ի՞նչ տեսք է ստանում պետության և հայրենիքի հարաբերությունը, արդյո՞ք պետությունը պետք է պատմական հայրենիքի տարածքում ընդլայնվելու քաղաքական ծրագիր ունենա և իրականացնի, թե՞ ուրիշ պետության տարածքում հայտնված պատմական հայրենիքը համարվում է այլևս կորսված, արդյո՞ք նույնն են պետության և հայրենիքի գաղափարական և արժեքային հիմքերը, բավարա՞ր է արդյոք հայրենասիրությունը պետություն ստեղծելու և զարգացնելու համար, և այլն: Մինչ այս հարցերին անդրադառնալը հարկ է արձանագրել, որ թե՛ պետության, թե՛ հայրենիքի սահմանների դեպքում գլխավոր խնդիրը նույնն է՝ անվտանգությունը. պետության պարագայում՝ ֆիզիկական, իսկ հայրենիքի դեպքում՝ հոգևոր-մշակութային անվտանգություն: Եվ եթե պետական սահմանի անվտանգության ապահովման միջոցները հայտնի են, ապա ինչպե՞ս է ապահովվում հայրենիքի հոգևոր անվտանգությունը: Այդ գերխնդիրը, ամենայն հավանականությամբ, լուծվում է, այսպես կոչված, **սրբազանեցման** միջոցով. հայրենիքի տարածքը դառնում է դրախտավայր, ազգային լեզուն՝ աստվածային, նախնիները՝ հերոսներ, և այլն: Այդ կերպ ստեղծվում է հայրենիքի հոգևոր կոթողը՝ սուրբ և անձեռնմխելի: «Ինքնիշխան հայրենիքը կորցնելու մշտական վտանգներից, իսկ հաճախ նաև իրական վտանգներից ելնելով՝ հայ անհատը ազգային հավաք ինքնության հիմնական ատրիբուտները ստիպված «տեղափոխել» է ապահով ու անվտանգ հոգևոր ոլորտ՝ փորձելով ապրել ու հարմարվել արտաքին պարտադրանքներին՝ արդեն որպես վերազգային քաղաքացի»[5]: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ հայ ազգային մշակույթի զարգացումը Հայաստանում (հայրենիքում) պարբերաբար ընդհատվել է պետականության կորստով, զանգվածային գաղթերի և այլ պատճառներով, ինչը որոշակի իմաստով ընկալվել է որպես հայրենիքի կորուստ: Այդ պատմական օրինաչափութ-

[4] Տե՛ս **Գայանե Մախմուրյան**, Պատմական և քաղաքական հայրենիքի սահմանները // «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 01.07.2021: (https://hhpress.am/hanrapetutyun/2021/2070/?fbclid=IwAR0pAWoiHOHaErASYEPsGqCQbQ7WfNYVcoentkT8F2rICCc14fsM5cgoSw)

[5] **Էդվարդ Հարությունյան**, Ազգային ինքնություն և կյանքի մշակույթ, Եր., ԵՊՀ հրատ., 2004, էջ 25:

յունը յուրահատուկ կերպով հաղթահարվել է հոգևոր ոլորտում կայուն և ամբողջական մի համակարգի ստեղծմամբ, որը վեր է ֆիզիկական աշխարհում տեղի ունեցող փոփոխություններից և հանդես է գալիս որպես ինքնության վերաստեղծման օջախ և ազգի մետաֆիզիկական տուն:

Հայրենիքի մասին հիշողությունները, այն վերագտնելու և այնտեղ վերադառնալու ցանկությունը որոշակի իմաստով մշտապես արդիական են պահել հայ հասարակության մեջ այն միտքը, որ պետությունը նախևառաջ պետք է զբաղվի այդ հարցերով: Այս միտումը հակասություն է մտցրել հայրենիքի և պետության ընկալումներում. նորաստեղծ, իր գործառույթներն ամբողջությամբ չկատարող, այս կամ այն ղեկավարի քմահաճույքներին ենթարկվող պետությունը չի արժևորվում այնպես, ինչպես հայրենիքը, ընկալվում է որպես ժամանակավոր և անհուսալի: Եվ իրոք, ազգային-մշակութային ավանդույթներով կյանքի կազմակերպման հարուստ փորձ ունեցող հասարակության պարագայում պետությունը դեռ պետք է ապացուցի հանրային կյանքի կազմակերպման իրավաքաղաքական ձևերի բարձր արդյունավետությունը և արժեքը: Այլ կերպ ասած՝ պետական ինստիտուտները պետք է ավելի փորձառու և իմաստուն գտնվեն, քան տվյալ հասարակության մեջ տարածված կյանքի կազմակերպման ավանդական ձևերը: Հակառակ դեպքում ստացվում է, որ «պետությունը միշտ էլ ավելի աղքատիկ բովանդակություն ունի, քան Հայրենիքը և հակված է ձևականացնել Հայրենիքի հուզական-հոգևոր բովանդակությունը: Հենց միայն այն, որ պետությունը ազգի քաղաքական կառավարման ձև է, որի հետ ազգի ոչ բոլոր անդամները կարող են համամիտ լինել, նշանակում է՝ պետության ու Հայրենիքի նույնացումը գրեթե անհնարին է»[6]: Հետևաբար, պետք է տարբերություն դրվի նաև հայրենիքի և պետության նկատմամբ վերաբերմունքի միջև: Եթե հայրենիքի նկատմամբ պաշտամունքային-հուզական վերաբերմունքը ազգային հայրենասիրությունն է, ապա պետք է լինի նաև պետական հայրենասիրություն: Ազգային հայրենասիրությամբ հնարավոր չէ քննել և լուծել ազգային խնդիրները քաղաքական իրատեսության մակարդակում, որովհետև այդ հայրենասիրությունն ուղեկցվում է ազգային միֆերով, պատմությունը գաղափարախոսության մակարդակում ընկալելու միտումով և ապագային ուղղված քաղաքական նախագծեր ստեղծելու և իրականացնելու անկարողությամբ: Ազգային հայրենասիրության տեսանկյունից պետությունը գործիք է առաջին հերթին ազգային խնդիրների (օր.՝ պահանջատիրություն, պատմական հայրենիքի վերականգնում) լուծման համար: Այսպիսի հայրենասիրությունն առաջնորդվում է ազգային գաղափարախոսությամբ, մինչդեռ պետական հայրենասիրությունն առա-

[6] Նույն տեղում, էջ 44:

վել համարժեք կերպով արտահայտվում է ազգային-պետական կամ, ավելի շուտ, պետական-ազգային գաղափարախոսությամբ:

Այս իմաստով մեր գլխավոր խնդիրն այն է, որ դեռևս չենք կարողանում սահմանազատել գաղափարախոսությունը և քաղաքականությունը հայրենիքի և պետության փոխհարաբերությունների համատեքստում: Պետությունը **քաղաքականություն** է վարում հանրային կյանքի տարբեր ոլորտներում՝ լուծելով առկա հիմնախնդիրները և դրանով հանդերձ ավելի կանխատեսելի ու կառավարելի դարձնելով ապագան: Օրինակ՝ արդարության գաղափարը կարող է տարբեր իմաստավորումներ ունենալ գաղափարախոսական տարբեր հայեցակարգերում, բայց կիրառական բնույթ է ստանում **արդարադատության**՝ կոնկրետ գործողությունների միջոցով: Այսինքն՝ պետությունը չի զբաղվում գաղափարախոսության տարածմամբ, այլ իրականացնում է կոնկրետ ծրագրեր, դիվանագիտական աշխատանք և այլն:

Գաղափարախոսական աշխատանքով զբաղվում են կուսակցությունները, որոնք հանրության շրջանում տարածում են իրենց գաղափարները, պատկերացումները հասարակական կյանքի կազմակերպման մասին և այդկերպ պայքարում են իշխանության գալու համար: Հայրենիքը՝ պատմական տարածքը, ազգի բնօրրանը, նույնպես ազգային գաղափարախոսության «առարկա» է, ոչ թե պետական քաղաքականության օբյեկտ կամ նպատակ[7]: Պատմական հայրենիքի վերականգնումը (վերադարձը, միավորելը) կարող է գրավիչ **գաղափար** լինել շատ-շատերի համար, որի շուրջ մարդիկ կհավաքվեն, կկազմակերպեն քննարկումներ և կփնտրեն համախոհներ: Բայց հայրենիքի վերականգնումը չի կարող լինել պետական մշակված քաղաքականության նպատակ: Պետության առաջնահերթ խնդիրը տվյալ տարածքում՝ սահմաններում, հանրային կյանքի իրավաքաղաքական կազմակերպումն է:

Եթե պետության սահմանները ֆիզիկական են և ավարտվում են մեկ այլ պետության սահմաններով, ապա հայրենիքի սահմանը ֆիզիկական չափում չունի, և հայրենիք են համարվում այն տարածքները, որոնցում սկզբնավորվել, ձևավորվել և զարգացել է տվյալ էթնոսը: Այս իմաստով տարբեր ժողովուրդներ կարող են հավակնել իրենց հայրենիքը համարելու միևնույն ֆիզիկական տարածքը, որը բնակեցրել են պատմության տարբեր ժամանակահատվածներում և որտեղ տարածել են իրենց մշակույթը: Այսինքն, կարելի է եզրակացնել, որ պետության սահմանները ֆիզիկական են, իսկ հայրենիքի սահմանները՝ մշակութային: «Այսօր Արևմտյան Հայաստանում հայերը նվազ փոքրամասնություն են կազմում: Այստեղ ապրում են բազմաթիվ քրդեր, որոնք իրենց պայքարն են տանում թուրքերի դեմ, բայց որևէ մեկը չի ասում, որ այդ տարածքը Թուրքիա չէ քաղաքական առումով: Քրդերի ապրելն

[7] Տե՛ս **Сандомирская И.** Родина в советских и постсоветских дискурсивных практиках // ИНТЕРакция. ИНТЕРвью. ИНТЕРпретация. 2004, № 2-3, էջ 16-26:

այդ տարածքում դեռ չի նշանակում, որ այն քրդական տարածք է կամ պետություն, թեև քրդական բնակչությունը կապվածություն է զգում մեր պատմական հայրենիքի հետ»[8]: Ի դեպ, այս իրավիճակի հետ ուղղակի առնչություն ունի իրավական այն կարգավորումը, որը կիրառվում է այն դեպքերում, երբ պետության սահմանները հստակ չեն կամ ճանաչված չեն այլ պետությունների կողմից: Հայոց ցեղասպանությունից հետո քեմալականները չէին ասում, որ իրենց վերահսկողության տակ գտնվող բոլոր տարածքները թուրքական են: Նրանք լավ գիտակցում էին, որ գրավել են Հայաստանին պատկանող շրջաններ, որոնց նկատմամբ չեն կարող ամրագրել «թուրքերի հայրենիք» ձևակերպումը: Ուստի նրանք նշում էին, որ Թուրքիայի տարածք են համարում բոլոր այն հողերը, որոնք այդ պահին վերահսկվում էին թուրքական բանակի և քաղաքացիական վարչության կողմից: Սա արդեն քաղաքական սկզբունք է, որով ամրագրվում է, որ պետությունն այն տարածքն է, որը գտնվում է քո վերահսկողության տակ: Այդ սկզբունքն է արտացոլված նաև Արցախի Հանրապետության Սահմանադրության մեջ. «Մինչև Արցախի Հանրապետության տարածքային ամբողջականության վերականգնումը և սահմանների ճշգրտումը հանրային իշխանությունը իրականացվում է այն տարածքում, որը փաստացի գտնվում է Արցախի Հանրապետության իրավազորության ներքո»[9]: Ի տարբերություն Թուրքիայի, որը քաղաքական իշխանություն տարածեց թուրքերին որպես հայրենիք չպատկանող տարածքներում, Արցախի պարագայում պետությունը տարածվեց հայրենիքի մի հատվածում միայն:

Ասվածից հետևում է, որ հստակ տարբերություններ կան պետական հայրենասիրության և ազգային հայրենասիրության միջև թե՛ սուբյեկտի, թե՛ օբյեկտի, թե՛ գործողությունների առումով: Պետական հայրենասիրության սուբյեկտը քաղաքացին է՝ անհատը, որի հայրենասիրությունը դրսևորվում է իր չափով պետության զարգացմանը նպաստելու մեջ՝ աշխատանքի, հարկ վճարելու, կարգ ու կանոն պահպանելու և հանրային բարիք ստեղծելու այլ ձևերով: Մինչդեռ ազգային հայրենասիրությունը *արարողակարգային* բնույթ ունի և արտահայտվում է առավելապես ելույթի, մաղթանքի կամ կենացի տեսքով: Պետական հայրենասիրությունը ենթադրում է ամենօրյա ջանք, մինչդեռ ազգային հայրենասիրությունը կարող է «բավարարվել» հայրենիքի կյանքում սիմվոլիկ ներկայությամբ և մասնակցությամբ: Ազգային հայրենասիրության սուբյեկտը ավանդական-ազգային մշակութային էակն է, որի կապը հայրենիքի հետ առավելապես բարոյական, այլ ոչ թե իրավական պարտականությունների տիրույթում է: Պատկերավոր ասած՝ ազգային հայրենասիրության դրսևորման տարածված ձևերից են այս-

[8] **Գայանե Մախմուրյան**, նշվ. աշխ.:

[9] Արցախի Հանրապետության Սահմանադրություն: Հոդված 175. Արցախի Հանրապետության իրավազորության սահմանները (http://www.nankr.am/hy/1838):

պես կոչված ուխտավորի սերը և գաղթականի սերը: Առաջինն իր բարոյական պարտքը հայրենիքին տալիս է որոշակի պարբերականությամբ այցելելու և իր կարոտը կոնկրետ վայրերից ու պատմական օբյեկտներից առնելու ձևով: Իր հերթին գաղթականի սերը և կարոտն ուղղված են դեպի իր ծննդավայրը, հայրական տունը, երջանիկ մանկության տարիները և այլն:

Հայերի պարագայում ազգային հայրենասիրության մաս դարձած *պահանջատիրությունը* նույնպես տարբեր դրսևորումներ է ստանում՝ կախված նրանից, թե ում է ուղղված: Ըստ այդմ կարելի է առանձնացնել ներքին և արտաքին պահանջատիրություն: Ներքին պահանջատիրության դեպքում քաղաքացին ինքն իրենից և մյուսներից պահանջում է ունենալ պետություն և զարգացնել այն, կատարելագործել հանրային կյանքի կազմակերպման քաղաքական և իրավական մեխանիզմները և այլն: Ներքին պահանջատիրությունը դրսևորվում է այն բանում, որ յուրաքանչյուր քաղաքացի պետությունից պահանջում է սահմանել վարքի այնպիսի կանոններ, որոնք իրեն թույլ կտան «պատասխանատու տեր» լինել վստահված ոլորտում, իսկ մյուս քաղաքացիներից պահանջում է ընդունել տվյալ ոլորտում իր «տեր» լինելը:

Արտաքին պահանջատիրությունն արդեն ուղղված է այլ երկրներին ու միջազգային կազմակերպություններին և դրսևորվում է պատմական արդարության վերականգնման պահանջի տեսքով, որը ներառում է տարածքների վերադարձ, փոխհատուցում, պատիժ և այլն: Բայց երբ հասարակությունը տրվում է արտաքին պահանջատիրության հայրենասիրական-հուզական գայթակղությանը, այն մի կողմից կտրվում է ներքին պահանջատիրությունից և մոռանում այս պահի ներքին կյանքի կազմակերպման (որպես կանոն՝ առավել մեծ) անհրաժեշտության մասին, իսկ մյուս կողմից կորցնում է քաղաքական ժամանակի գիտակցումը, որովհետև պատմական արդարության և դրանից բխող մյուս պահանջները ժամանակ չեն ճանաչում: «Հայրենիքի ու Պետության համակարգիչ հատկանիշները իրարից տարբերվում են նաև քաղաքական ժամանակի ընկալմամբ: Ըստ էության հայրենիքը դուրս է քաղաքական ժամանակի տիրույթից: Այն հոգևոր ապրում է և ենթակա չէ ժամանակի քաղաքական պահանջներին: Հայրենիքի Պահանջատիրությունը երկընտրանք չի ընդունում և չի կարող դառնալ քաղաքականություն: Մինչդեռ քաղաքական կազմակերպման ենթարկված Հայրենիքը՝ Պետությունը, կարող է և պարտավոր է ազգային խնդիրները հոգեբանական դաշտից տեղափոխել ընկերային, տնտեսական ու քաղաքական դաշտ՝ դրանց տալով գործնական բնույթ ու բովանդակություն: Այլ կերպ ասած՝ Հայրենիքը ղեկավարվում է արյան կանչով, Պետությունը՝ քաղաքական իրատեսությամբ»[10]:

Ակնհայտ է, որ ազգային հայրենասիրությունը որպես ազգային

[10] **Էդվարդ Հարությունյան,** նշվ. աշխ., էջ 44:

խնդիրների ձևակերպման գլխավոր ռազմավարություն որդեգրած հասարակությունը նույնչափ չի արժևորելու պետությունը, որը իրականում այդ նույն խնդիրներին առավել ռացիոնալ բանաձևեր և կիրառական լուծումներ տվող համակարգ է: Այս իմաստով կարևոր են ոչ միայն հայրենիքի ու պետության սահմանների սահմանազատումը, այլև պետության սահմանների ճշգրտումը ոչ միայն ֆիզիկական, այլև ռեսուրսների առումով: Այսինքն՝ պետության մի յուրահատուկ սահման է նաև այն գործողությունների հորիզոնը, որոնք իրականացնելու համար անհրաժեշտ ռեսուրսների կիրառումը չի վտանգի պետության գոյությունը, իսկ սահմանազանցումը տվյալ դեպքում արդեն հարցականի տակ չի դնի պետության և հասարակության վերականգնվելու հնարավորությունը:

Մարդու գործունեությունն առհասարակ ենթադրում է ինչպես սահմանազծում, այնպես էլ **սահմանազանցում** (տրանսգրեսիա) և **անդրանցականություն** (տրանսցենդենցիա): Սահմանազանցումն առավել մեծ ուշադրության է արժանացել հետմոդեռնիստական փիլիսոփայության շրջանակներում, որտեղ մեկնաբանվել է որպես սոցիալական արգելքների, մշակութային ավանդույթների և բարոյական նորմերի հաղթահարման մարտավարություն[11]: Ակնհայտ է, որ սահմանազանցումը հասարակության զարգացման ուղեկցող երևույթ է, որովհետև հանրային կյանքի քաղաքական, իրավական, տնտեսական և մյուս ոլորտներն անընդհատ փոփոխվում են, ինչը ենթադրում է նաև դրանց սահմանների փոփոխություն, հետևաբար՝ սոցիալական արգելքների, մշակութային ավանդույթների և բարոյական նորմերի սահմանազանցում և նոր սահմանազծում: Այս առաջին տարբերակում սահմանազանցումը դրսևորվում է որպես ներքին հնարավորությունների ընդլայնում: Բայց եթե փորձենք գտնել սահմանազանցման արտահայտություններ Հայաստանի հասարակության կյանքում, ապա կտեսնենք երևույթի երկրորդ՝ հակառակ դրսևորումը. մենք չենք փորձում կամ չենք կարողանում ընդարձակել այստեղ մեր գոյության սահմանները, նոր իմաստներ, արժեքներ ու հեռանկարներ սահմանել, ինչի հետևանքով նախընտրում ենք արտագաղթել ուրիշ երկիր (տեղափոխվել այլ սահմանների մեջ): Սա պայմանավորված է, թերևս, այն բանով, որ Հայաստանում ապրելը նույնացվում է առաջին հերթին հայրենիքում, այլ ոչ թե պետությունում ապրելու հետ: Այստեղից բխում է հանրային կյանքի կազմակերպման հարցում ոչ թե իրավաքաղաքական մեխանիզմներին, այլ ազգային-ավանդական մշակութային ձևերին նախապատվություն տալը: Իսկ դրանցով գծված հայրենիքի սահմանները, որոնցով չափում ենք մեր ազգային կյանքը, ընկալվում են որպես սուրբ և անփոփոխ, հետևաբար՝ ընդարձակման կամ սահմանազանցման ոչ ենթակա: Սակայն մարդու և հասարակության բնականոն կյանքը են-

[11] Տե՛ս **Бунтман Н. В.** Нарушение границ: возможное и невозможное // **Жорж Батай,** Литература и зло. М., МГУ, 1994, էջ 5-14:

թադրում է, որ այս պահին «գործող» բոլոր սահմանները վաղը կարող են փոխվել: Բայց երբ հասարակական կյանքի կառուցարկման մեջ առաջնային են ոչ թե ժամանակի հրամայականները և դրանցից անհրաժեշտաբար բխող փոխակերպումները, այլ հայրենիքի մետաֆիզիկական ընկալումները, արտագաղթը դառնում է ուրիշ իրականությունում (այլ սահմաններում) ապրելու թերևս միակ տարբերակը:

Ինչ վերաբերում է անդրանցականությանը, ապա այս երևույթը վերաբերում է միայն պետության սահմաններին, երբ դրանց փոխարեն հասարակական գիտակցությունում արդիականացվում է նախնիների սրբացված, միֆականացված երկրի պատկերը, ինչը նպաստում է պետության սահմաններից, դրանց քաղաքական, իրավական և տնտեսական նշանակությունից և այլ հատկանիշներից վերացարկվելուն: Անդրանցականության դեպքում մենք, փաստորեն, վերացարկվում ենք առկա իրողություններից՝ առաջնային նշանակություն տալով հայրենիքի կերպարին, որն ապրեցնելը միգուցե հանգստացնում է մարդու խիղճը և այդ իմաստով հոգեբանական բավարարվածություն հաղորդում նրան, սակայն արդյունքում կրկին չլուծված են մնում ամենօրյա խնդիրները, որոնց հաղթահարումը պետք է խթաներ հասարակության և պետության զարգացումը:

Կարելի է եզրակացնել, որ սահմանազանցումը և սահմաններից վերացարկումը մեր պարագայում ոչ արդյունավետ մարտավարություններ են, որովհետև չեն նպաստում առկա հիմնախնդիրների լուծմանը: Ազգային պետության կայացման, ազգային խնդիրները հոգեբանական-հուզական ոլորտից քաղաքական և ավելի կիրառական այլ ոլորտներ տեղափոխելու համար առավել արդյունավետ ճանապարհ է ավանդական ինքնության արդիականացումը: Ընդ որում՝ այնպիսի արդիականացումը, որի ընթացքում ինքնության մեջ առաջնային նշանակություն ստանան այն տարրերը, որոնք հայերի հոգեբանության մեջ կապահովեն անցումը էթնիկությունից դեպի քաղաքացիություն և կներդաշնակեցնեն էկզիստենցիալ և սոցիալական գոյությունները[12]:

МОВСЕС ДЕМИРЧЯН – ***Проблема разграничения идеологии и политики в контексте взаимоотношений родины и государства.*** – В силу исторической судьбы армянского народа вопросы, связанные с отношениями границ родины и государства, получили большой теоретический и практический резонанс в контексте современных геополитических преобразований. Проблема в том, что историческая родина и политическая родина (государство) армянского народа не совпадают ни в территориальном, ни в содержательном отношении. В то же время морально-эстетическая абсолютизация исторической родины создала идеал, олицетворяющий прошлое, по сравнению с которым политическая родина с ее беспокойной повседневной жизнью, бесконечными проблемами и новыми вызовами

[12] Այդ մասին տե՛ս **Էդվարդ Հարությունյան,** Պետությունը էկզիստենցիալ ճակատագրի խրամատներում // Բանբեր Երևանի Համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն, 2021, № 1, էջ 18:

теряет для многих свою привлекательность и ценность. В связи с этим, для понимания сути проблемы и выработки возможных решений, новый смысл и значение приобретают понятия трансгрессии и трансценденции. Трансгрессия, в нашем случае, характеризует не расширение собственных культурных границ, а направление поиска более «устоявшегося» бытия (жизни) за пределами своих границ в иных социокультурных и цивилизованных пространствах. Второе понятие – трансцендентность – выражает мифический, вечно актуальный и первичный образ исторической родины, который иногда заслоняет актуальность стоящих перед государством жизненных проблем и необходимость их решения.

Ключевые слова: *родина, государство, граница, трансгрессия, трансцендентность, идеология, патриотизм*

MOVSES DEMIRCHYAN – *The Problem of Differentiating Ideology and Politics in the Context of the Relationship between the Motherland and the State.* – Due to the historical fate of the Armenian people, issues related to the relationship between the borders of the homeland and the state have received great theoretical and practical resonance in the context of modern geopolitical transformations. The problem is that the historical homeland and the political homeland (state) of the Armenian people do not coincide either territorially or in terms of content. At the same time, the moral and aesthetic absolutization of the historical homeland has created an ideal that embodies the past, in comparison with which the political homeland with its troublesome everyday life, endless problems, and new challenges loses its attractiveness and value for many. In this regard, to understand the essence of the problem and outline possible solutions, the concepts of transgression and transcendence acquire a new meaning and significance. Transgression, in our case, does not characterize the expansion of one's own cultural boundaries but the direction of the search for a more "stable" being (life) beyond its borders in other socio-cultural and civilized spaces. The second concept – transcendence, expresses a mythical, eternally relevant, and primary representation of the historical homeland, which sometimes obscures the relevance of the life problems facing the state and the need to solve them.

Key words: *homeland, state, border, transgression, transcendence, ideology, patriotism*